ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 94/10

Քաղ. Երեւան 27 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հունվարի 27-ի նիստում (արձանագրություն N76/3) քննարկեց PFAFF AQS GmbH automatiche Quaitatskontrllsysteme ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2009թ. նոյեմբերի 27-ի բողոքը «NUCLEUS» IR 921440 բառային ապրանքային նշանը ՀՀ տարածքում ԱԾՄԴ 09-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման գործողության տարածման կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Բողոքում ներկայացված է, որ 2009 թվականի մայիսի 29-ի կրկնական փորձաքննության որոշմամբ «NUCLEUS» IR 921440 ապրանքային նշանի իրավական պահպանությունը ՀՀ տարածքում մերժվել է՝ հիմք ընդունելով ավելի վաղ առաջնությամբ COHLEAR AG ընկերությանը պատկանող «NUCLEUS» IR 565660 միջազգային գրանցման առկայությունը:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացրեց կոլեգիայի անդամ՝ պրն. Ա.Բաբայանը: Նա նշեց, որ կրկնական փորձաքննության որոշման համար հիմք են հանդիսացել «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 15.2-րդ եւ 93.2-րդ կետերը, համաձայն որոնց նշանը չի կարող գրանցվել նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ միջազգային գրանցում ունեցող շփոթելու աստիճան նման COHLEAR AG ընկերությանը պատկանող «NUCLEUS» IR 565660 ապրանքային նշանի առկայության պատճառով:

Նա նշեց, որ բողոքում արձանագրված է, որ մերժված ապրանքային նշանի սեփականատեր PFAFF AQS GmbH automatiche Quaitatskontrllsysteme և հակադրված ապրանքային նշանի սեփականատեր COHLEAR AG ընկերությունները համաձայնության են եկել և կնքել են համագոյատևման պայմանագիր: Բացի այդ, COHLEAR AG ընկերությունը սահմանափակել է իր

ապրանքների ցանկը, նշելով իր ապրանքների կիրառման ոլորտը՝ «առողջապահության և առողջությունը պահպանելու համար», ինչի մասին համապատասխան դիմում է ներկայացրել ՄՍՀԿ-ի Միջազգային Բյուրո:

Այսինքն՝ COHLEAR AG եւ PFAFF AQS GmbH automatiche Quaitatskontrllsysteme ընկերությունների գործունեությունը բոլորովին չի հատվում սպառողական շուկայում, մանավանդ, որ COHLEAR AG ընկերության նշանը նախկինում օգտագործվել է, այժմ և ապագայում օգտագործվելու է բժշկական (առողջապահական) նպատակներով: Իսկ մերժված «NUCLEUS» նշանը, ինչպես նշված է ապրանքների ցանկում, բոլորովին չի առընչվելու «առողջապահության և առողջությունը պահպանելու համար», բնագավառների հետ:

Այսպիսով COHLEAR AG ընկերության ապրանքային նշանի 09-րդ դասի ապրանքները օգտագործվում են բժշկության բնագավառում, մինչդեռ մերժված եւ PFAFF AQS GmbH automatiche Quaitatskontrllsysteme ընկերության «NUCLEUS» 09-րդ դասի ապրանքները օգտագործվելու են «ոչ բժշկական նպատակով»:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1 ենթակետով բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել PFAFF AQS GmbH automatiche Quaitatskontrllsysteme ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2009թ. նոյեմբերի 27-ի բողոքն ամբողջությամբ, չեղյալ ճանաչել 2009թ. մայիսի 5-ի կրկնական փորձաքննության որոշումը եւ գրանցել NUCLEUS» (հայտ IR 921440) միջազգային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում՝ ԱԾՄԴ 09-րդ դասի ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողո-քարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան